



Հասցե. ՀՀ, 3103, ք.Ապարան, Բաղրամյան 26  
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 53 62  
Էլ.փոստ [aarhusaparan@mail.ru](mailto:aarhusaparan@mail.ru)

Address Bagramian 26 , Aparan, 3103, RA  
Tel./Fax +/ 252/ 6 53 62  
E-mail [aarhusaparan@mail.ru](mailto:aarhusaparan@mail.ru)

## ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ( 2010թ. Հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս )

Հաշվետու ժամանակահատվածում Ապարանի Օրհուս կենտրոնում կազմակերպվել և իրականացվել են նախատեսված, ինչպես նաև աշխատանքային պլանում նախատեսված չգտած հետևյալ աշխատանքները, նախապատրաստվել, կազմակերպվել և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

### 1. Կենտրոնի գործունեության ամփոփ նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանում ( 2010թ-ի հինգ ամիսներ ) կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ անցկացվել են մոտ երկու տասնյակ միջոցառումներ՝ սեմինարներ, դասընթացներ, հանդիպումներ, էքսկուրսիաներ, ցուցահանդես և այլն, կազմակերպվել են հանդիպումներ հիմնարկությունների, ուսումնական հաստատությունների, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, երիտասարդների հետ: Հանդիպումների ընթացքում ձեռք է բերվել բնապահպանական միջոցառումների համատեղ անցկացման պայմանավորվածություն:

Կենտրոնում անցկացված միջոցառումները հիմնականում ուղղված են եղել Օրհուսի կոնվենցիայի տեղեկատվության մատչելիությունը դրույթի իրագործմանը , ինչպես նաև էկոլոգիական կրթության և էկոլոգիական մտածելակերպի ձևավորմանը:

Օրհուսի կոնվենցիայի՝ հասարակության որոշումներ կայացնելու դրույթի ուղղությամբ կենտրոնում անցկացվել է հանրային քննարկում Ապարանի ջրամաքրման կայանի վերականգնման անհրաժեշտության վերաբերյալ, որը առաջին անգամ էր կազմակերպվում համայնքում: Հանրային քննարկմանը մասնակից՝ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչները կարևորեցին այդ միջոցառումը, որովհետև այն հնարավորություն է տալիս հասարակայնությանը բարձրացնել և քննարկել համայնքի կարևոր բնապահպանական խնդիրները: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը համագործակցել է տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, հասարակայնության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների հետ, տրամադրել է տեղեկատվություն, տեսաֆիլմեր: Կենտրոնի հոդվածները և հայտարարությունները տպագրվել են մարզային մամուլում, տպագրվել և տարածվել են լրատվական թերթիկներ:

Կենտրոնի նախաձեռնությամբ տպագրվել է և տարբեր կազմակերպությունների, այդ թվում Օրհուս կենտրոններին, տրամադրվել թվով 30, ինֆորմացիոն բնույթի, համակարգչային սկավառակ Ապարանի պատմության և պատմական հուշարձանների, մշակույթի, ֆոլկլորի, սոստեսության, բնության, բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ: Կենտրոնի տարածքը, գույքը տրամադրվում է այլ կազմակերպությունների միջոցառումներ անցկացնելու համար (Գորիսի Երիտասարդական միություն ՀԿ, Ապարանի երիտասարդական կազմակերպություն , Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա ՀԿ ), Կենտրոնում ստեղծվել է տեղեկատվական բազա համայնքի բնակչիմայական պայմանների, շրջակա միջավայրի հարցերին առնչվող հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ առաջարկվող միջոցառումների մասին: Կենտրոնում պատրաստվում են Power Point ծրագրով ուսուցողական համակարգչային նյութեր, որոնցից մի քանիսը տրամադրվել են համայնքի դպրոցներին, թեմային համապատասխան դասերին օգտագործելու նպատակով: Ցավոք կենտրոնը չունի պրոեկտոր, ինչը բացասաբար է ազդում անցկացվող միջոցառումների արդյունավետության ու որակի վրա:

Կենտրոնում աշխատանքներ են տարվում քաղաքի Բաղրամյան փ. 22 շենքի բակի ճահճացման խնդրին լուծում տալու հարցում: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն են այցելել 317 մարդ, ինչը կազմում է Ապարանի բնակչության 5%-ը: Ավելացել է կենտրոնի գործունեությանը մասին տեղեկացված համայնքի բնակիչների թիվը:

## 2. Տարժման նյութեր, հոդվածներ, լրատվական թերթիկներ

- Կենտրոնում անցկացված սեմինարների վերաբերյալ հոդվածները ուղարկվել են [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքին
- << Պեստիցիդները մեր կյանքում >> վերնագրով հոդված է ուղարկվել մարզային << Գյուղխորհրդատվություն >> թերթին ( տպագրվել է 2010թ. 2-րդ համարում)
- << Պահպանենք զարնան ավետաբեր ծաղիկը >> վերնագրով հոդված է ուղարկվել մարզային << Գյուղխորհրդատվություն >> թերթին ( տպագրվել է 2010թ. 3-րդ համարում)
- Պատրաստվել են և տարածվել ձնծաղիկի պահպանության ու պեստիցիդների վտանգավորության վերաբերյալ լրատվական թերթիկներ:
- տպագրվել է և տարածվել ինֆորմացիոն բնույթի, համակարգչային սկավառակ Ապարանի պատմության և պատմական հուշարձանների, մշակույթի, ֆուլկլորի, տնտեսության, բնության, բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ:
- Կենտրոնի գրադարանը և տեսադարանը հարստացվել են տեղեկատվական նոր գրքույկներով և տեսասկավառակներով:
- Շնորհակալագրեր են հանձնվել կենտրոնի միջոցառումներին լավագույն մասնակցության համար:

## 3. կենտրոնի կողմից իրականացված հանդիպումները

- Կենտրոնի աշխատակիցները հանդիպում են ունեցել Արագածոտնի մարզպետի հետ, ներկայացվել են Ապարանի Օրհուս կենտրոնի 2009թ գործունեությունն ու կատարած աշխատանքները, ներկայացվել են համայնքի բնապահպանական խնդիրները:
- Կենտրոնի աշխատակիցները հանդիպում է ունեցել Ապարանի անտառտնտեսության տնօրենի և աշխատակիցների հետ:
- Կենտրոնում անցկացվող միջոցառումների վերաբերյալ նախնական պայմանավորվածություն ձևեր բերելու նպատակով համակարգողը հանդիպումներ է ունեցել դպրոցների, հիմնարկությունների, ՏԲՄ-երի ներկայացուցիչների, ոստիկանության, կուսակցական և հասարակական կազմակերպության անդամների ու աշխատակիցների հետ:
- << Ապարանի ջրամաքրման կայանը >> թեմայով հասարակական քննարկմանը հրավիրելու նպատակով համակարգողը հանդիպել է պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ:
- Շրջակա միջավայրի հարցերին առնչվող տեղեկատվություն ստանալու նպատակով կենտրոն են այցելել երկու ուսանողներ ( Ախթալա գետի աղտոտվածության վերաբերյալ ):
- Կենտրոն են այցելել քաղաքացիներ գրադարանից և տեսադարանից օգտվելու նպատակով :
- Քաղաքացիներին տրամադրվել է տպագրական ծառայություն:
- Բաղրամյան 22 շենքի տարածքի ճահճացման հարցով համակարգողը հանդիպում է ունեցել Ապարանի քաղաքապետի, փոխքաղաքապետի, Բնապահպանական ծրագրերի իրականացման կենտրոնի (ՊՈԱԿ) աշխատակցի հետ:
- Ապարանի բնապահպանական խնդիրները քննարկելու և դրանք լուծելու ուղիների վերաբերյալ համակարգողը հանդիպում է ունեցել << ՆԻԳ-Ապարան >> հայրենակցական հասարակական կազմակերպության տնօրենի հետ:

## 4. Կենտրոնի աշխատանքների հավաստիացման աղբյուրներ

- Տարեկան աշխատանքային պլան
- Հոդվածներ, թերթեր, լրատվական թերթիկներ, սեմինարների վերաբերյալ նյութեր
- Միջոցառումների, սեմինար՝ քննարկումների արձանագրություններ
- Լուսանկարներ
- Շնորհակալագրեր
- Պատրաստվել է << Չեռնոբիլի աղետը >>, Մեր բնաշխարհի թոշունները >> և << Քասաղը՝ կոյուղատար >> համակարգչային երեք շնորհանդես (power point prezentation):
- Կենտրոնի միջոցառումների մասնակիցների ցուցակներ:
- Ուսուցանվող թեմաների ինտերնետային նյութեր:
- Ֆինանսական ծախսերը հաստատող ապրանքագրեր, կտրոններ:
- Էլեկտրոնային կայքեր

## 5. Համագործակցություն

- Ապարանի քաղաքապետարան
- ԵԱՀԿ
- << Նիգ- Ապարան >> հայրենակցական ՀԿ
- << Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա >> ՀԿ
- ՀՀԿ Ապարանի կանանց խորհուրդ
- Օրհուս կենտրոններ
- Բուհ-երի , քոլեջի, դպրոցների, արվեստի դպրոցի սովորողներ,
- Ոստիկանության աշխատակիցներ
- ՁԼՄ-ներ ( Գյուղխորհրդատվության թերթ, տեղական հեռուստաալիք ):
- Ջրմուկկոյուղի, սանեպիդեմ ծառայություն, անտառտնտեսություն:

## 6. Ապարանի Օրհուս ԲՏՀԿ կատարած աշխատանքները

1. Հունվարի 14-ին տեղի ունեցավ Ապարանի Օրհուս կենտրոնի և Ապարանի անտառտնտեսության աշխատակիցների աշխատանքային հանդիպում:

Հանդիպմանը ներկա էին "Հայանտառ" ՊՈԱԿ- ի հետ Ապարանի անտառտնտեսության տնօրեն Վ. Աբրահամյանը և աշխատակիցները , գլխավոր մասնագետ Վարդգես Ստեփանյանը, Դ. Ներսիսյանը Մասնակցների թիվը` 5:

Աշխատանքային հանդիպման նպատակն էր տեղեկատվություն ստանալ և հետագայում բնակչությանը իրազեկել անտառտնտեսության կատարված անտառվերականգնման և անտառահատման աշխատանքների մասին:

2. Փետրվարի 3-ին Ապարանի Օրհուս կենտրոնի աշխատակիցները Արագածոտնի մարզպետի հրավերով այցելեցին Աշտարակ քաղաքի մարզպետարան, ներկայացվեցին Ապարանի Օրհուս կենտրոնի Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթների իրագործմանը ուղղությամբ կատարած աշխատանքները, քննարկեցին Ապարան համայնքի բնապահպանական հիմնախնդիրները, որոնք վերաբերում են ջրային, հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, կենցաղային և արդյունաբերական թափոնների կառավարմանը, Քասախ գետի աղտոտմանը, ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրներին, բուսական ու կենդանական ռեսուրսների պահպանմանը և այլ հարցերի:

3. Փետրվարի 16-ին Ապարանի Օրհուս կենտրոնի տեղի ունեցավ դասընթաց « Պետսիցիդները մեր կյանքում » թեմայով: Սեմինարը վարեց կենտրոնի համակարգող Ն. Մանուկյանը: Հրավիրված էին Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի Ապարանի մասնաճյուղի մի խումբ ուսանողներ: Դասընթացի նպատակն էր ներկաներին ծանոթացնել ժամանակակից աշխարհում լայնորեն կիրառվող, թունաքիմիկատների խմբին պատկանող, պետսիցիդներ կոչվող նյութերին, որոնք օգտագործում են գյուղատնտեսության, արդյունաբերության, առողջապահության և այլ բնագավառներում: Մասնակցների թիվը` 15:

4. Մարտի 1-ին Ապարանի Երիտասարդական գործունեության ակումբում Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ , « ՏՄՊԱՆ » Էկո-ակումբ ՀԿ Ապարանի SPARE խմբակի հետ համատեղ տեղի ունեցավ Թմրամոլությունը և ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ը » թեմայով սեմինար` քննարկում նվիրված թմրամոլության դեմ պայքարի միջազգային օրվան: Սեմինարը վարեց Ապարանի թ. 2-րդ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի Ն. Մայիլյանը : Հրավիրված էին Ապարանի թ. 3-րդ դպրոցի աշակերտներ : Օգտագործվեցին համապատասխան գրականություն, հեռուստացույցով ցուցադրվեց տեսասկավառակ` «ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ը » : Մասնակցում էին 15 հոգի:

5. Մարտի 5-ին Ապարանի Օրհուս Կենտրոնում տեղի ունեցավ դասընթաց մի խումբ դպրոցականների համար: Դասընթացի նպատակն էր մասնակիցները տեղեկատվություն տալ ՀՀ Կարմիր գիրքի մասին: Համակարգողը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետությունը աչքի է ընկնում բուսական ու կենդանական աշխարհի վիթխարի բազմազանությամբ , հռչակված է բույսերի ու կենդանիների հազվագյուտ տեսակներով: Այսօր, մարդու գործունեության հետևանքով, բուսատեսակներից ու կենդանիներից շատերը ներառված են Հայաստանի <<կարմիր գրքում >>, որը հազվադեպ և ոչնչացման վտանգի տակ գտնվող օրգանիզմների համակարգված ցուցակ է: Առաջին կարմիր գիրքը` ստեղծված ԲՊՄՄ նախաձեռնությամբ 20-րդ դարի

50-ական թթ-ին, ընդգրկում էր ողջ մոլորակը: ՀՀ << կարմիր գիրքը >> ստեղծվել է 1989թ-ին, 15 տարիների աշխատանքից հետո:

Մասնակիցների թիվը՝ 16:

6. Մարտի 11-ին Ապարանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ « Իրավապահները և բնապահպանությունը » քննարկ սեմինար: Մեմինարը վարեց կենտրոնի համակարգող Ն. Մանուկյանը :

Հրավիրված էին Ապարանի ոստիկանության սպաներ, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը, համայնքի գյուղատնտեսության հարցերի խորհրդատուն, ուսուցիչներ: Նպատակն էր քննարկման մասնակիցներին ներկայացնել, որ ներկայումս բնապահպանական գործում բացառիկ մեծ նշանակություն է տրվում բնակչության տարբեր խավերի դերի, բնակչության էկոլոգիական կուլտուրայի բարձրացմանն ու բնապահպանական գիտելիքների տարածմանը: Ներկաները իմացան , որ գրեթե բոլոր երկրներում , նաև ՀՀ-ում ընդունվել են բնապահպանության և բնօգտագործման մասին պետական օրենքներ, մշակվել են բնօգտագործման ու բնապահպանական կանոններ և նորմատիվներ , բնօգտագործման վարձեր և տուգանքներ բնապահպանական օրենսդրությունը խախտելու համար, բնությանը պատճառած վնասների հատուցումներ: Օգտագործվեց համակարգչային ֆոտոնյութեր, համապատասխան գրականություն: Մասնակցում էին 8 հոգի:

7. Մարտի 9-ին Ապարանի ավագ և մարտի 12-ին թ. 3-րդ դպրոցներում տեղի ունեցան սեմինար՝ քննարկումներ մի խումբ դպրոցականների և ուսուցիչների հետ, զարնան ավետաբերի՝ ձնծաղիկի պահպանության նպատակով: Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգողը ներկաներին տեղեկացրեց , որ զարնան ավետաբերը՝ ձնծաղիկը տարածված է Եվրոպայում և Ասիայում, հանդիպում է նաև ՀՀ-ում, ընդ որում այս տեսակին շատ մոտ գտնվող անդրկովկասյան ձնծաղիկը որպես հազվագյուտ տեսակ գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում, մինչդեռ շատ ու շատ մարդիկ և հատկապես երեխաներ անխնա վերաբերմունք են դրսևորում այս հազվագյուտ ծաղիկի նկատմամբ: Ճանապարհամերձ տարածքներում վաճառելու նպատակով արմատախիլ են արվում դրանք, արագանում է դրանց անհետացումը:

Մասնակիցների թիվը՝ Ավագ դպրոցում՝ 15, Ապարանի թ-2-րդ դպրոցում՝ 25:

Ապարանի թ. 2-րդ դպրոցում Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված մարտի 16-ի հանդեսը եզրափակեց ձնծաղիկի պահպանությանը նվիրված միջոցառումների շարքը:

Մասնակիցների թիվը՝ 30: Ընդհանուր թիվը՝ 70

8. Մարտի 23-ին Ապարանի Օրհուս կենտրոնում կայացավ հանրային քննարկում Քասաղ գետի աղտոտվածության և Ապարան քաղաքի ջրամաքրման կայանի վերականգնման անհրաժեշտության վերաբերյալ: Քննարկմանը մասնակցում էին Ապարանի փոխքաղաքապետը, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը, ,,Հայջրմուղկոյուղի,,ՓԲԸ-ի Ապարանի ենթամասնաճյուղի պետը, ,,գյուղատնտեսության և բնապահպանության,, սանիտարահիգիենիկ ծառայության գլխավոր մասնագետները, ԳԱՄԿ-ի Ապարանի գյուղխորհրդատուն, գլխավոր հողաշինարարը, Մուլքիի գյուղապետը, հասարակայնության հետ կապերի մասնագետը, ,,Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա" ՀԿ և ՀՀԿ տարածքային կանանց խորհրդի նախագահները, միջհամայնքային միավորման իրավաբանը, կրթական հարցերի պատասխանատուն, որսորդմիության մարզային տեսուչը, դպրոցների տնօրեններ, ավագանու երկու անդամներ, տեղական հեռուստատալիքի ներկայացուցիչը ;

Մասնակիցների թիվը՝ 18.

9. Ապրիլի առաջին կիրակի օրը Ապարանի Օրհուս կենտրոնում կայացավ սեմինար՝ քննարկում << Ընդերքի ռեսուրսները և դրանց օգտագործումը >> թեմայով, որին մասնակցում էին ԵՊՀ-ի, Մանկավարժական համալսարանի, Ոստիկանության ակադեմիայի, ՀՊՏՀ -ի ապարանցի ուսանողներ, ավագանու անդամ, տեխնոլոգիական քոլեջի տնօրեն , Ապարանի << Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա >> ՀԿ պատասխանատուն:

Կենտրոնի համակարգողը տեղեկացրեց, որ Երկրաբանի օրը օգտակար հանածոների հայտնագործմամբ ու արդյունահանմամբ զբաղվողների մասնագիտական տոնն է, ներկայացրեց հանրապետության ընդերքի ռեսուրսները՝ մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերը, դրանց շահագործման եղանակները, ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ճյուղերը և արտադրանքը, կենտրոնները: Նշեց, որ հանքավայրերի շահագործումը և մետաղների ձուլումը սնտեսական մեծ օգուտներ է բերում , բայց և մեծ վնաս է հասցնում բնական միջավայրին: Մասնակիցների թիվը՝ 12:



10. «Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ-ն Ապարանում

Մարտի 29-ից ապրիլի 10-ը Ապարանի Օրհուս կենտրոնում << Գորիսի Երիտասարդական Միություն>> ՀԿ-ն Ապարան քաղաքի և հարակից տարածքների գյուղական համայնքների ՏԻՄ-երի ղեկավարների, տեղակալների, աշխատակազմի քարտուղարների, հաշվապահների, ֆինանսիստների և ավագանու անդամների համար Հայաստանի Սոցիալական ներդրումներ հիմնադրամի, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացնում է << Մունիցիպալ ֆինանսական կառավարման ուսուցում >> ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում ունենալ ՏԻՄ օրենսդրության և ֆինանսական գործառնությունների ուղղությամբ գրագետ Տեղական ինքնակառավարման մարմիններ, կրթության միջոցով բարձրացնել ՏԻՄ մարմինների կառուցվածքները համայնքների զարգացման և նրանցում աղքատության հաղթահարման ուղղությամբ, նպաստել ՏԻՄ ինստիտուտի հզորացմանը, նրա կառույցների կարողությունների զարգացմանը, աջակցել գյուղական համայնքներում կյանքի որակի բարելավմանը:

11. Ապրիլի 15-ին Ապարանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ թ.2-րդ դպրոցում կազմակերպվեց “Հայրենի բնաշխարհի թռչունները” խորագրով ցուցահանդես, որի նպատակն էր մասնակիցներին ներկայացնել հանրապետության թռչնաշխարհի էկոլոգիական ու գեղագիտական դերը, նրա նշանակությունը, պահպանության անհրաժեշտությունը:

Ցուցադրվեց աշակերտների կողմից գունազարդված, մեր հանրապետության թռչնաշխարհը ներկայացնող 39 ցուցանմուշ՝ հայոց այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխան: Ցուցահանդեսին հրավիրված էին ծնողներ, ուսուցիչներ, տնօրինության ներկայացուցիչներ, աշակերտներ: Աշակերտներից յուրաքանչյուրը բնութագրեց իր գունազարդած թռչունը, ներկայացրեց տարածման վայրերը, բնադրման պայմանները, Կարմիր գրքում ներառված, օրենքով պաշտպանված թռչնատեսակները : Մացնակիցների թիվը՝ 70:

12. Ծառատունկ

Ապրիլի 21-ին „Երկրի օրվա „ կապակցությամբ Ապարանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ Ապարան քաղաքի թ.2-րդ և թ. 3-րդ դպրոցների շրջակայքում իրականացվեց տարածքի մաքրում և ծառատունկ: Ծառատունկին մասնակցեցին դպրոցականներ, մանկավարժներ, իրավապահներ:

Հիմնականում տնկվեցին պտղատու ծառատեսակներ ( 150 բալենի ): Ապագա բալենու այգները ապարանցիների փոքրիկ ներդրումն է „ Երկրի օրվա „՝ աշխարհով մեկ անցկացվող կանաչապատման միջոցառումներին:

Ծառատունկը անցկացնելու նպատակով Օրհուս կենտրոնի համակարգողը հանդիպումներ է ունեցել քաղաքի բոլոր դպրոցների ղեկավարների, ուսուցիչների, աշակերտների , ծնողների հետ: Տեղեկատվություն է տրվել Երկիր մոլորակի օրվա խորհրդի մասին: Ծառատունկի մասին համաձայնեցվել է քաղաքապետարանի ղեկավարության հետ , արժանացել՝ հավանության:

Կենտրոնի համակարգողը քաղաքի բնակիչներին դիմել է խնդրանքով բալենու տնկիներ տրամադրելու վերաբերյալ: Աշակերտների, նրանց ծնողների ջանքերով հավաքվել է 200 տնկի, որոնք ապրիլի 22-ին տնկվել են թ2-րդ և թ 3-րդ դպրոցների տարածքներում:

13. Ապրիլի 22-ին Ապարանի Օրհուս կենտրոնը Ապարանի երեք դպրոցների թվով 18 աշակերտների, 3 ուսուցիչների և 2 ծնողների համար կազմակերպեց էքսկուրսիա Երևան "Երկրի օրվա" 40-րդ հոբելյանին նվիրված Երևանի Օրհուս կենտրոնի , Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա ՀԿ –ի նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի աջակցությամբ կազմակերպված „Ապրիլ կանաչ„ խորագրով նկարչական մրցույթին մասնակցելու նպատակով: Մրցույթից բացի երեխաների համար կազմակերպվել էին խաղեր, զվարճալի և հետաքրքրաշարժ բեմադրություններ, ինչպես նաև Հայաստանի բնաշխարհը պատկերող ցուցահանդես: Փոքրիկ ապարանցիները մեծ բավականություն ստացան միջոցառումից և տուն վերադարձան իննը մրցանակներով : Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 23:

14. Ապրիլի 27-ին Օրհուս կենտրոնը Ապարանի Արվեստի դպրոցում անցկացրեց դասընթաց „ Չոռնոբիլի աղետը „ թեմայով, որի նպատակն էր դպրոցի աշխատակիցներին տեղեկացնել, որ Ապրիլի 26-ը Ռադիացիոն վթարներում և աղետներում զոհվածների հիշատակի օրն է, իսկ Չոռնոբիլի աղետը խոշորագույն տեխնաձիհ աղետն է մարդկության ողջ պատմության ընթացքում:

Կենտրոնի համակարգողը տեղեկացրեց, որ ի տարբերություն Հիրոսիմայի և Նագասակիի ատոմային ռմբակոծության, Չոռնոբիլի ԱԷԿ-ի աղետի հիմնական խոցելի գործոնը 200 000կմ<sup>2</sup> տարածքի ռադիոակտիվ աղտոտումն էր ( ԽՍՀՄ Եվրոպական մաս, Արևելյան Եվրոպա, Սկանդինավիա), ինչի բացասական ազդեցությունը և հետևանքները մարդու և շրջակա միջավայրի վրա անդրադառնում են տասնամյակներ:

Մասնակիցների թիվը՝ 15:

15. ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ Մայիսի 6-ին Ապարանի Օրհուս կենտրոն էին հրավիրվել այն աշակերտները և նրանց ծնողները, ովքեր մասնակցել էին ապրիլի 22-ին Երկրի օրվա՝ 40-րդ հոբելյանին նվիրված Երևանի Օրհուս կենտրոնի, Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա ՀԿ –ի նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի աջակցությամբ կազմակերպված „Ապրիլ կանաչ, խորագրով նկարչական մրցույթին և արժանացել մրցանակների:

Ընտրակալագրերի հանձնմանը ներկա էին նաև ուսուցիչներ, ծնողներ, Ապարանի կրթության, մշակույթի, սպորտի հարցերի պատասխանատու Ա, Դավթյանը, հասարակայնության հետ կապերի պատասխանատու Շ. Քոչարյանը: Ապարանի Օրհուս կենտրոնի կողմից յոթ աշակերտների շնորհվեցին շնորհակալագրեր:

16. Մայիսի 6-ին Ապարանի Օրհուսի կենտրոնում տեղի ունեցավ չվող թռչունների պաշտպանության միջազգային օրվան նվիրված դասընթաց՝ „ Ապարանի տարածաշրջանի թռչունները „ թեմայով Power point ցուցադրմամբ: Հրավիրված էին աշակերտներ, նրանց ծնողները, ուսուցիչներ, Ապարանի կրթական հարցերի և հասարակայնության հետ կապերի պատասխանատուները: Դասընթացի մասնակիցներից ամենա տարիքովը՝ 70, իսկ ամենափոքրը՝ 6 տարեկան էր: Կենտրոնի համակարգողը դասընթացի մասնակիցներին տեղեկացրեց, որ վերջին 300 տարիների ընթացքում

Երկիր մոլորակից անհետացել է թռչունների 150 տեսակ, այժմ ոչնչացման վտանգի տակ է գտնվում թռչունների յուրաքանչյուր 10-րդ տեսակը: Պատճառները՝ բնական լանդշաֆտների փոփոխությունն է, մարդածին լանդշաֆտների ընդարձակումը, ճահիճների չորացումը, գետերի ու լճերի ծանծաղումը, բնական միջավայրի աղտոտումը քիմիական նյութերով, ինչպես նաև թռչունների չկարգավորվող որսը:

Մասնակիցների թիվը՝ 20:

17. Մայիսի 17-ի Ապարանի բնապահպանական խնդիրները քննարկելու և դրանք լուծման ուղիների վերաբերյալ համակարգողը հանդիպում է ունեցել << ՆԻԳ-Ապարան >> հայրենակցական հասարակական կազմակերպության տնօրենի հետ:

18. Մայիսի 22-ից Ապարանի թ. 2-րդ դպրոցի մի խումբ աշակերտներ, կենսաբանության ու քիմիայի ուսուցիչների ղեկավարությամբ և Ապարանի Օրհուս կենտրոնի աջակցությամբ իրականացնում են Գերմանական Տեխնիկական Համագործակցության ( gtz ) կենսաբազմազանության կայուն կառավարում Հարավային Կովկասում, Հայաստանի գետերի ու առվակների էկոլոգիայի մոնիթորինգ ծրագիրը, որի նպատակն է բացահայտել և ուսումնասիրել գետերի ու առվակների կենսաբանական ցուցիչները և հսկիչները: Կենսաբանական ցուցիչներ են կոչվում այն օրգանիզմները, որոնց առկայությամբ կամ բացակայությամբ, դրանց զարգացման աստիճանով հնարավոր է պատկերացում կազմել տվյալ միջավայրի որոշ հատկությունների մասին , եզրակացություններ անել տվյալ բնամիջավայրի վիճակի վերաբերյալ, բնութագրել աղտոտվածության աստիճանը: Այդ ցուցիչների օգնությամբ հնարավոր է ճշգրտորեն կանխորոշել միջավայրի փոփոխությունը ( աղտոտումը ) և, համապատասխանաբար, միջոցներ ձեռնարկել բացասական ազդեցությունների վերացման ուղղությամբ:

Ծրագրով նախատեսված է Ապարանի տարածաշրջանում մոնիթորինգ իրականացնել Քասաղ գետի ջրհավաք ավազանի հինգ հենակետերում Քասաղի և նրա վտակների ջրի որակի գնահատման նպատակով սապրոբային համակարգի մեթոդի կիրառմամբ:

Մասնակիցների թիվը՝ 15:

19. Կենսաբազմազանության Միջազգային օր օրվա կապակցությամբ՝ մայիսի 27-ին Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ Ապարանի դպրոցների մի խումբ աշակերտների և ուսուցիչների համար բնապահպանական դաստիարակության ու կրթության, ինչպես նաև բնապահպանական մտածելակերպի զարգացման նպատակով կազմակերպվեց էքսկուրսիա Երևան՝ Հայաստանի բնության պետական և երկրաբանության թանգարաններ:

Էքսկուրսիայի մասնակիցների թիվը 20՝ (17 աշակերտ, 3 ուսուցիչ):

Աղյուսակ I Կենտրոնի միջոցառումների մասնակիցներ թիվը

ամիս	Միջոցառումների մասնակիցներ
Հունվար	-
փետրվար	15 մարդ
մարտ	127 մարդ
ապրիլ	120 մարդ
մայիս	55 մարդ
ընդամենը	317 մարդ

Աղյուսակ II Կենտրոնի ծառայությունից օգտվել են

month	գրադարան	ֆիլմոդարան	ինտերնետ	պատճենահանում
Հունվար	2	1	1	4
փետրվար	1	1	1	3
Մարտ	5	1	-	3
Ապրիլ	2	2	2	2
Մայիս	1	2	3	4
Ընդամենը	11	7	7	16

Աղյուսակ III կենտրոնի միջոցառումների քանակը

ամիս	աշխատանքային հանդիպումներ	դասախոսություններ	դասընթացներ	Սեմինարներ	Ցուցահանդես	Դպր. Հանդեսներ	Հանրային քննարկ	Հորվածներ մամուլում	Էքսկուրսիաներ
Հունվար	2	-	-	-	-	-	-	-	-
փետրվար	-	-	1	-	-	-	-	1	-
Մարտ	1	-	1	3	1	1	1	1	-
Ապրիլ	-	-	2	1	-	-	-	-	1
Մայիս	3	-	1	-	-	-	-	-	1
Ընդամենը	6	-	5	4	1	-	1	2	2





